ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 9(50), 26 դեկտեմբերի, 2022թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ աշխատակիցներ, սիրելի՛ սովորողներ,

Ավարտին է մոտենում 2022 թվականը, մենք շարունակում ենք միասին ստեղծել մեր պատմությունը. այս դժվարին էջից հետո այն, ավելի քան վստահ եմ, լինելու է փայլուն:

Անցնող տարին մեզ ևս մեկ անգամ հնարավորություն ընձեռեց համոզվելու ու ցույց տալու, որ ուժեղ ենք, գիտենք պայքարել, կանգուն մնալ և առաջ շարժվել:

Սիրելի՛ հայրենակիցներ, մեր միասնության, մեր մշակույթի ուժը հզոր է ցանկացած չարիքից և սպառնալիքից: Մեզնից՝ յուրաքանչյուրից է կախված, թե ինչպիսին կլինի մեր պատմության հաջորդ էջը, գալիք տարին և ապագա սերունդների Հայաստանը:

2022 թվականը պակաս կարևոր չէր նաև ՀՀ ոստիկանության համար: Չնայած բազմաթիվ դժվարություններին՝ 2022 թվականը մեծածավալ աշխատանքի, դրանք իրականացնելու, վճռականությամբ առաջ շարժվելու տարի էր:

Մենք արդեն ունենք իրավունքի գերակայության հիման վրա կերտված Հայաստանի այն տեսլականը, որը քայլ առ քայլ կիրականացնենք ծառայողներից յուրաքանչյուրի հայրենանվեր աշխատանքի շնորհիվ:

Սիրելի՛ աշխատակիցներ և սովորողներ, գալիք՝ 2023 թվականը թող լինի Ձեզ համար ձեռքբերումների, համերաշխության ու հաջողությունների տարի, և թող իրականանան Ձեր բոլորի նվիրական երազանքները:

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և Ձեր ընտանիքներին Ամանորի և Սուրբ ծննդյան տոնի կապակցությամբ, մաղթում խաղաղություն ու բարեկեցություն:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ ծնունդ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գնդապետ
Մանուկ Մուրադյան

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ ՄՐՑԱՆԱԿԸ ԵՎ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄՐՑԱՆԱԿԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻՆՆ ԵՆ

«Հայաստան, Արցախ, Սփյուռք» AAD.am մրցանակաբաշխությունն արդեն 13-րդ անգամ տարբեր ոլորտների լավագույններին շնորհում է մրցանակներ: ՀՀ ոստիկանության կրթահամալիրը ևս բացառություն չէ. Հասարակություն-ոստիկանություն կապի ամրապնդման գործում ունեցած ավանդի համար մրցանակի արժանացավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Տաթևիկ Թևոսյանը: Տարվա լավագույն երիտասարդ տիտղոսակիրը նույնպես Կրթահամալիրից էր՝ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի սովորող Ռաֆայել Հովհաննիսյանը, որը մեծ հաջողություններ է գրանցել բռնցքամարտի բնագավառում՝ դառնալով Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր:

Շնորհավորում ենք մրցանակակիրներին, մաղթում նորանոր հաջողություններ:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 4-9-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ Միսակ Մարկոսյանը միջգերատեսչական պատվիրակության կազմում գործուղվել էր Էստոնիայի Հանրապետության մայրաքաղաք Տալլին:

Գործուղումն իրականացվել էր Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (OSCE) աջակցությամբ՝ Ներքին գործերի նախարարության ձևավորման գործընթացում արտասահմանյան փորձի ուսումնասիրության նպատակով:

Պատվիրակության անդամները հանդիպումներ են ունեցել Էստոնիայի Հանրապետության Ներքին գործերի նախարարության, դրա կազմում գործող Ոստիկանական և սահմանապահ ծառայության, Փրկարար ծառայության, «112» կենտրոնի և մի շարք այլ ստորաբաժանումների ղեկավար կազմի և ներկայացուցիչների հետ:

Պատվիրակության անդամներն այցելել են նաև Էստոնիայի Անվտանգային գիտությունների ակադեմիա, որտեղ հանգամանորեն ծանոթացել են ակադեմիայի կառուցվածքին, նյութատեխնիկական հագեցվածությանը, իրականացվող կրթական ծրագրերին, ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱՈՃԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱՎԱՐՏՎԵՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

Հայ-ֆրանսիական ոստիկանական համագործակցության շրջանակներում նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը Հայաստանում էին Լիլիի հանցագործության դեմ պայքարի բրիգադի ստորաբաժանման ղեկավար Ֆրեդերիկ Նոթը և Ստրասբուրգի հասարակական անվտանգության վարչության բրիգադիր Մարքես Դա Սիլվա Ֆիթջերալդը: Այցի նպատակը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում վերապատրաստման դասընթացի անցկացումն ու փորձի փոխանակումն էր: Դասընթացին մասնակցում էին ՀՀ ոստիկանության պարեկային ծառայողները:

Եռօրյա դասընթացի ընթացքում մասնակիցները հասցրին ծանոթանալ ֆրանսիական ոստիկանության գործելաոճին՝ Ֆրանսիայում բանակցային հմտությունների կիրառման կարգին, զանգվածային միջոցառումների ընթացքում հասարակական կարգը պահպանելու կանոններին: Մասնակիցները նշեցին, որ Ֆրանսիայի ազգային ոստիկանության մոդելը և փորձը՝ կապված պարեկային ծառայության հետ, մի շարք ընդհանրություններ ունի ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության հետ, և հավաստիացրին, որ ստացած գիտելիքներն ու փորձը բավականին արդյունավետ կարող են կիրառել իրենց պրակտիկ աշխատանքում:

Միջոցառման ավարտին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանը շնորհակալություն հայտնեց ֆրանսիացի փորձագետներին համագործակցության համար, որից հետո մասնակիցներին հանձնվեցին վկայականներ, իսկ Ֆրեդերիկ Նոթը, դասընթացը համարելով բավականին արդյունավետ, նշեց, որ իրենք ևս շատ բան ունեն սովորելու հայ գործընկերներից, և շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար:

ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐԸ ԴԻՊԼՈՄ ՍՏԱՑԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ ակադեմիայի մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2022-2023 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: Ներկա էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Մուրադյանը և Կրթահամալիրի ղեկավարությունը:

Ութ շրջանավարտից երկուսն արժանացան գերազանցության դիպլոմի:

Մ.Մուրադյանը շնորհավորեց շրջանավարտներին՝ հույս հայտնելով, որ նրանք իրենց գիտելիքները կներդնեն հանցավորության դեմ պայքարի, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, օրինականության ամրապնդման գործում:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՄՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅՈՒՄ

Իրավապահ համակարգն ու համայնքները, ՁԼՄ և ոստիկանություն կապը, առաջնորդության դերն իրավապահ մարմիններում, հանցագործի վարքը, ֆիզիկական պատրաստվածությունն իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար. վազք, ուժային վարժություններ ու տարատեսակ այլ առաջադրանքների հաղթահարում: Այսպես էր ընթանում Քուանտիկոյում ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի ազգային ակադեմիայի սովորողների առօրյան: Վերապատրաստման 11-շաբաթյա դասընթացին մասնակցելու համար ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի Ազգային ակադեմիայում էր համախմբվել աշխարհի տարբեր իրավապահ մարմինների 237 ներկայացուցիչ:

Դասընթացին մասնակցությունը նախաձեռնվել էր ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության ԹՊԻՀ ծրագրի շրջանակում. նպատակն էր վերապատրաստել իրավապահ մարմինների ներկայացուցիչներին, ծանոթանալ տարատեսակ իրավական մշակույթներին, ազգային ավանդույթներին ու ԱՄՆ տարբեր նահանգների ոստիկանության աշխատանքներին:

ՀՀ ոստիկանությունը ներկայացնում էր Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան Անի Ղուկասյանը:

Վերապատրաստման ընթացքում Կրթահամալիրի ներկայացուցիչը հնարավորություն ունեցավ նաև ներկայացնելու ՀՀ ոստիկանության գործունեությունը, կառուցվածքը, հանցավորության դեմ պայքարի առանձնահատկությունները, իրականացված բարեփոխումները, ՀՀ-ում ոստիկանական կրթական ծրագրերը, ինչպես նաև Հայաստանի բազմադարյա իրավական մշակույթը:

Դասընթացը հագեցած էր հետազոտական, խմբային աշխատանքներով, քննարկումներով, փորձի և կարծիքների փոխանակմամբ, ինչպես նաև ակտիվ ֆիզիկական պարապմունքներով: Դասընթացի ավարտին մասնակիցները հանձնեցին ամփոփիչ ստուգումներ և ստացան ավարտական վկայականներ:

Ամփոփիչ ստուգումների ավանդական մասն էր կազմում «Դեղին աղյուսե ճանապարհ» կոչվող 6 մղոն երկարությամբ մարտահրավերը, որը Կրթահամալիրի ներկայացուցիչը հաղթահարեց պատվով և գերազանց:

Դասընթացի ընթացքում եղան նաև ճանաչողական այցեր Վաշինգտոնում գտնվող Հետաքննությունների դաշնային բյուրոյի կենտրոնական շտաբ, Պենտագոն, Նյու Յորքի և Ֆիլադելֆիայի ոստիկանության վարչություններ:

Ըստ մասնակցի՝ դասընթացը սովորեցրեց կյանքում առաջ եկած ցանկացած մարտահրավեր հաղթահարել և յուրաքանչյուր փոփոխությունից հետո ունենալ նոր նպատակներ ու ձգտումներ:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԵՎՐՈՊՈՒՄ

Նոյեմբերի 9-10-ը Հաագա քաղաքում գտնվող Եվրոպոլի կենտրոնակայանում տեղի ունեցավ ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (ՍԻՊՈԼ) Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վերապատրաստում և գործառնական համագործակցություն (TOPCOP) տարածաշրջանային ծրագրի 3-րդ բաղադրիչի (Տարածաշրջանային սպառնալիքների գնահատում և հատուկ աջակցություն) պատասխանատուների համար նախատեսված հերթական վերլուծական դասընթացը: ՀՀ ոստիկանության կրթահամալիրից մասնակցում էր ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Կարինե Սաֆարյանը:

Դասընթացի առաջին օրը Եվրոպոլի վերլուծաբանների հետ համատեղ քննարկվեցին «Ծանր և կազմակերպված հանցավորության սպառնալիքների գնահատման տարածաշրջանային զեկուցման» համար տեղեկատվություն ձեռք բերելու բոլոր հնարավոր աղբյուրները: Համաձայնություն ձեռք բերվեց զեկույցի մեջ ընդգրկել հանցավորության առնվազն 5 հիմնական տեսակ, որոնց դեմ պայքարը բոլոր շահառու երկրներում որպես գերակա ոլորտ է սահմանված:

Հանդիպման երկրորդ օրը SOCTA (Ծանր և կազմակերպված հանցավորության սպառնալիքների գնահատում) մասնակից երկրների ներկայացուցիչների հետ մեթոդոլոգիային համահունչ մշակվեց միասնական հարցաշարի նախնական տարբերակը, որի օգնությամբ պետք է իրականացվի ազգային մակարդակում տեղեկատվության հավաքագրման գործընթացը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Դեկտեմբերի 15-ին առցանց եղանակով տեղի ունեցավ ԱՊՀ մասնակից պետությունների ՆԳՆ բարձրագույն ուսումնական հաստատությունների ասոցիացիայի և սոցիալ-իրավական հետազոտությունների միջազգային գիտական լաբորատորիայի հերթական հանդիպումը, որը կազմակերպեց և անցկացրեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրը: Հանդիպմանը մասնակցեցին ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիան, Բելառուսի Հանրապետության ՆԳՆ Մոգիլյովի ինստիտուտը, Բելառուսի Հանրապետության ՆԳՆ ակադեմիան, Բելառուսի Հանրապետության քննչական կոմիտեի որակավորման բարձրացման և վերապատրաստման ինստիտուտը, Ղազախստանի Հանրապետության ՆԳՆ Ալմաթայի Մ. Եսբուլատովի անվան ակադեմիան, Ղազախստանի Հանրապետության ՆԳՆ Կարագանդայի Բ. Բեյսենովի անվան ակադեմիան, Ղրղզստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիան և Տաջիկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիան: Կրթահամալիրից մասնակցեցին նաև ՈՒՄ վարչության միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գրիգորի Դավթյանը և Ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ Հռիփսիմե Խաչատրյանը:

Մեկնարկին բացման խոսքով հանդես եկավ Կրթահամալիրի պետ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը, որը ողջունեց մասնակիցներին և մաղթեց արդյունավետ աշխատանքային հանդիպում՝ ընդգծելով միջազգային այս կառույցի կարևորությունն ու դրա շրջանակներում իրականացվող գիտական աշխատանքները: Միջոցառումը վարում էր Կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Ասոցիացիայի 2022 թվականի գործունեության հաշվետվությունը, անդամ ուսումնական հաստատությունների ներկայացրած առաջարկները, հաստատվեց 2023 թվականի աշխատանքային պլանը, իսկ նիստի հաջորդ մասը նվիրված էր սոցիալ-իրավական հետազոտությունների միջազգային գիտական լաբորատորիային:

Համագործակցությունը շարունակվում է. ՀՀ ոստիկանության ՈՒՄ միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի նախաձեռնությամբ այս անգամ ՌԴ ՆԳՆ Օրյոլի իրավաբանական ինստիտուտի 3-րդ կուրսի սովորողների համար նույն օրը՝ դեկտեմբերի 15-ին, առցանց դասախոսություն էր պատրաստել Ակադեմիայի ՕՀԳ և քրեաբանության ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Ա.Սահակյանը՝ «Ընտանեկան բռնությունը որպես սոցիալական խնդիր» թեմայով:

Հանդիպման մեկնարկին ողջույնի խոսքով հանդես եկավ Ակադեմիայի պետի տեղակալ, ի.գ.թ. դոցենտ, ոստիկանության գնդապետ Ա.Հովհաննիսյանը: Նա, կարևորելով ընտրված թեմայի արդիականությունը, նշեց, որ այս արատավոր խնդրի շուրջ անվերջ պայքարել է պետք, որից հետո խոսքը փոխանցեց Օրյոլի իրավաբանական ինստիտուտի պետի տեղակալ, ի.գ.թ. դոցենտ, ոստիկանության գնդապետ Ա.Բուլիժկինին, որը ևս կարևորեց դասախոսության թեման և ավելացրեց, որ շատ կարևոր է իրավապահ համակարգի ճիշտ և համակարգված աշխատանքն արատավոր երևույթի դեմ պայքարելու համար:

Դասախոսության ավարտին մասնակիցները բանախոսին ուղղեցին թեմային առնչվող հարցեր, եղան քննարկումներ ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման տարբերակների վերաբերյալ:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ ՓՈՐՁԱՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դեկտեմբերի 1-ին Կրթահամալիրի անվճար ուսուցման 3-րդ կուրսի սովորողներն այս անգամ այցելել էին ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչություն:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Լ. Սարդարյանը «Կրիմինալիստիկա» առարկայի գործնական պարապմունքն անցկացրեց փորձաքրեագիտական վարչությունում՝ նպատակ ունենալով ամրապնդել սովորողների ձեռք բերած տեսական գիտելիքները:

Գործնական պարապմունքի ժամանակ սովորողներին ներկայացվեցին փորձաքննությունների տեսակները, վարչությունում վարվող մատնադրոշմային և գնդակապարկուճային հաշվառումները, ինչպես նաև փորձագետի պրակտիկ աշխատանքի նրբությունները:

Հատուկ հետազոտությունների բաժին այցելելով՝ սովորողները հնարավորություն ունեցան ծանոթանալու տարատեսակ օբյեկտների՝ իրականացվող հետազոտությունների տեսակներին, փորձաքննություններով լուծվող հարցերին:

Նրանք եղան նաև հետքաբանական հետազոտությունների բաժնում, որտեղ ծանոթացան մի

շարք հետաքրքիր հետազոտությունների պրակտիկ օրինակների, եղան նաև փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստական հետազոտությունների բաժնում, հետևեցին կեղծ դրամանիշների հետազոտման գործընթացին, ծանոթացան կեղծման տարածված եղանակներին:

Այցը սովորողներին հնարավորություն տվեց դրսևորել իրենց գիտելիքներն ու հմտությունները, որոնք ձեռք են բերել «Կրիմինալիստիկա» դասընթացի ուսումնասիրման ընթացքում:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ ԱՊԱԳԱ ՊԱՐԵԿՆԵՐԸ

Ընտանեկան իրավիճակներ, ճանապարհային պատահարներ, բնակարանային գողություն.

Կրթահամալիրում ապագա պարեկներն իրենց մասնագիտական հմտությունները սցենարային խաղարկումներով ամրապնդում և ավելի պատկերավոր են ընկալում ապագա ծառայությունը:

Դեկտեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 19-ը ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական կրթության 2021-2022 ուսումնական տարվա «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման երկրորդ հոսքի սովորողները մասնագիտական պրակտիկա են անցնում ոստիկանության պարեկային ծառայության անմիջական ենթակայության ստորաբաժանումներում, վարչակազմի ենթակառուցվածքային ստորաբաժանումներում:

Պրակտիկայի ընթացքում ոստիկանության կրթահամալիրում ԱՄՆ-ից ժամանած օտարերկրյա հրահանգիչները, ոստիկանության կրթահամալիրի ծառայողները և պայմանագրային դասախոսները դերասանների մասնակցությամբ անցկացնում են սցենարային իրավիճակների խաղարկումներ:

Մասնագիտական պրակտիկայի նպատակն է ձևավորել սովորողների մասնագիտական գործունեությունը, սահմանված նորմերին համապատասխան իրականացնել հմտությունները, ամրապնդել գործառույթներ իրականացնելիս անհրաժեշտ հատուկ միջոցներ կիրառելու ունակությունները, ձևավորել քաղաքացիների հետ շփումներում սահմանված էթիկայի նորմերը և բարեվարքության կանոնները գործնականում կիրառելու հմտությունները:

Դեկտեմբերի 20-ին և 21-ին մասնագիտական պրակտիկան կեզրափակվի ստուգարքներով:

Պրակտիկան իրականացվում է ԱՄՆ կառավարության աջակցությամբ:

ԴԱՍԱԽԱՂ՝«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԷԹԻԿԱ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻՑ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի 2-րդ կուրսի սովորողները մասնակցեցին հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գրիգորյանի կազմակերպած գործնական դասախաղ-քննարկմանը՝ «Ոստիկանության ծառայողի էթիկա և բարեվարքություն» առարկայի շրջանակներում: Դասախաղի թեման էր՝ «Մասնագիտական էթիկան՝ որպես ոստիկանի բարեվարքության խթանման և բարոյական խնդիրների հաղթահարման ուղենիշ»:

Դասախաղի նպատակն էր ամրապնդել սովորողների էթիկայի խնդիրների և բարեվարքության խթանմանն ուղղված գիտելիքները, նաև թե ինչպես է անձի բարոյականության ձևավորումը ներառում էթիկական ստանդարտներն ու վարքագիծը, ինչպես է այդ հարաբերությունն ազդում ոստիկանության ծառայողների մասնագիտական արդյունավետության վրա:

Ընթացքում սովորողներին ուղղվեցին հարց-խնդիրներ, քննարկվեցին այդ խնդիրների պատասխանները, նաև անդրադարձան էթիկայի նորմերի չպահպանման հետևանքներին՝ հաշվի առնելով համապատասխան օրենքները: Վերջում սովորողներն ուսուցողական ֆիլմ դիտեցին ոստիկանի բարեվարքության և մասնագիտական ընտրության կարևորության մասին:

ՖՈՐՈՒՄ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Նոյեմբերի 30-ին առցանց եղանակով կայացավ Չինաստանի հանրային անվտանգության ժողովրդական համալսարանի կազմակերպած Ոստիկանության ակադեմիաների ղեկավարների ֆորումը՝ «Ոստիկանական ակադեմիաների միջև համագործակցության ամրապնդումն անվտանգության կառավարման կարողությունների բարձրացման նպատակով» թեմայով:

Ֆորումին մասնակցում էին տարբեր երկրների ոստիկանական ուսումնական կառույցներ, որոնց ցանկում էին Արգենտինայի հանրային անվտանգության համալսարանը, Ուզբեկստանի ՆԳՆ ակադեմիան, Ֆիլիպինների հանրային անվտանգության քոլեջը, Չինաստանի Ցզյանսու ոստիկանության ինստիտուտը, Հունգարիայի հանրային ծառայության համալսարանը, Կամբոջայի ոստիկանության ակադեմիան, Հոնկոնգի ոստիկանության քոլեջը և ՀՀ ոստիկանության կրթահամալիրը:

Կրթահամալիրը ներկայացրեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Մուրադյանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց պրոֆեսիոնալ, գործընկերային և արդյունավետ միջազգային համագործակցության ձևավորման անհրաժեշտության, ինչպես նաև հանրային անվտանգության դեմ ուղղված մարտահրավերներին ժամանակին և համարժեք լուծում տալու մասին:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ «ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ՁԵՌՆԱՐԿՈՒՄ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի կողմից մշակվել է «Դասավանդման ինտերակտիվ մեթոդների առանձնահատկությունները» մեթոդական խորհրդատվությունը:

Մեթոդական խորհրդատվությունում ներկայացվում են դասավանդման ինտերակտիվ մեթոդների առանձնահատկությունները, հասկացությունը, տեսակները, ուսուցման պահանջներն ու պայմանները, սկզբունքներն ու արդյունքները, առանձին դեպքերում բերվում են նաև գործնական օրինակներ՝ խորհրդատվությունից օգտվելն ավելի պրակտիկ դարձնելու նպատակով:

Մեթոդական խորհրդատվության նպատակն է օժանդակել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դասախոսներին դասավանդման ընթացքում ուսուցման ինտերակտիվ մեթոդներ կիրառելու համար: Ինտերակտիվ մեթոդով ուսուցման ժամանակ դասախոսի խնդիրը սովորողների համար ակտիվ գործունեության պայմաններ ստեղծելն է: Այդ մեթոդները նպաստում են սովորողների գիտելիքների յուրացման գործընթացին, կարողությունների և գործնական հմտությունների դրսևորմանը:

«ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» (TOPCOP) ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Նոյեմբերի 15-16-ը Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում կայացավ ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (ՍԻՊՈԼ) «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վերապատրաստում և գործառնական համագործակցություն» (TOPCOP) տարածաշրջանային ծրագրի պատասխանատուների հերթական հանդիպումը: Կրթահամալիրից մասնակցում էր ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Կարինե Սաֆարյանը:

Հանդիպման նպատակն էր ծանոթանալ գործընկեր երկրների իրավապահ մարմինների կրթական համակարգերի առանձնահատկություններին, այդ հաստատություններում էլեկտրոնային ուսուցման հարթակներ ներդնելու ուղղությամբ տարվող աշխատանքներին, ինչպես նաև քննարկել հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների կարողությունների ամրապնդմանն ուղղված վերապատրաստման լրացուցիչ դասընթացներ կազմակերպելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Մասնակիցները ներկայացրել են իրենց երկրներում իրավապահ մարմինների կրթական և վերապատրաստման համակարգերը, մասնավորապես՝ ազգային մակարդակում թեմատիկ վերապատրաստումների ընդհանուր կառուցվածքը, հանցավորության նոր միտումների և սպառնալիքների պարագայում իրավապահ մարմինների հմտությունների կատարելագործման նպատակով վերապատրաստումների պլանավորման և անցկացման կարգը, թիրախային խմբի ընտրությունը, դասընթացի տևողությունը, մասնակիցների քանակը, դասընթացի համար պատասխանատու մարմինները, հաճախակի հանդիպող մարտահրավերներն ու դժվարությունները:

Քննարկվել են նաև գործընկեր երկրներում իրավապահ մարմինների կրթական հաստատություններում Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ դասընթացի միասնական ծրագիր ներառելու հնարավորությունը, որի հիման վրա ազգային մակարդակում կանցկացվեն ոլորտին վերաբերող վերապատրաստման դասընթացներ:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԱԽՈՍԻ ՏԻՏՂՈՍԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻՆՆ Է

Նոյեմբերի 26-ին և 27-ին տեղի ունեցավ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի կողմից ուսանողների համար կազմակերպված ապահովագրական իրավունքի ամենամյա դատախաղ-մրցույթը:

Մրցույթին մասնակցում էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Հայ-Ռուսական համալսարանի, և Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետները ներկայացնող 8 թիմ:

Ակադեմիայի թիմի կազմում ընդգրկված էին չորրորդ կուրսի սովորողներ Հայկ Վարդանյանը, Ռուզաննա Մարգարյանը, Սյուզաննա Ավալյանը և երկրորդ կուրսի սովորող, թիմի ավագ Նաիրի Զիլաբյանը: Թիմի մարզիչն Ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության կապիտան Գայանե Մարուքյանն էր:

Մրցույթն անցկացվեց երկու փուլով: Գրավոր փուլի արդյունքում, որտեղ թիմերը ներկայացրել էին հաճախորդի պահանջ-դիմումն ապահովագրական ընկերությանը և ընկերության պատասխանը հաճախորդին, Ակադեմիայի թիմը համալրեց լավագույն հնգյակը և անցավ բանավոր մրցափուլ:

Բանավոր մրցափուլի արդյունքում Ակադեմիայի թիմն զբաղեցրեց երրորդ հորիզոնականը՝ զիջելով միայն ԵՊՀ-ի հաղթող թիմին: Ակադեմիայի թիմի անդամ Սյուզաննա Ավալյանն ունեցավ նաև մրցանակ հաղթող անվանակարգում՝ արժանանալով դատախաղի լավագույն բանախոսի տիտղոսին: Մրցանակներ շնորհվեցին նաև լավագույն պահանջ-դիմում, լավագույն պատասխան և լավագույն հաղթող ճանաչված մասնակիցներին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համագործակցությունը շարունակվում է. այս անգամ ՌԴ ՆԳՆ Սիբիրի իրավաբանական ինստիտուտը դասախոսություն էր պատրաստել ՀԱՊԿ անդամ պետությունների ՆԳՆ ոստիկանական ուսումնական հաստատությունների սովորողների համար՝ «Քրեական օրենքը և դրա իրականացումը ՀԱՊԿ երկրներում» թեմայով:

Բացման խոսքով հանդես եկավ Սիբիրի իրավաբանական ինստիտուտի պետի միջազգային համագործակցության գծով օգնական, ոստիկանության փոխգնդապետ Դ. Լոտցը: Մասնակիցներին ողջունեցին նաև ՀԱՊԿ Քարտուղարության խորհրդական Մ. Մելիխովը և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Հովհաննիսյանը: Վերջինս իր խոսքում նշեց, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի ընդունման համատեքստում ընտրված թեման ավելի քան արդիական է:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ուսանողներից բացի դասախոսությանը մասնակցեցին նաև Բելառուսի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիաների ուսանողները: Դասախոսությունն անցկացրեց Սիբիրի իրավաբանական ինստիտուտի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ոստիկանության գնդապետ Պ. Տեպլյաշինը:

Դասախոսության ավարտին մասնակիցների կողմից բանախոսին ուղղվեցին թեմային առնչվող հարցեր: Քննարկումներ եղան ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման տարբերակների վերաբերյալ:

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Ուզում եմ գրել այն մարդկային որակների մասին, որ պարտավոր է ունենալ իրավաբանը՝ անկախ նրանից, թե որքան բանիմաց մասնագետ է:

Եթե ընտրել ես իրավաբանի մասնագիտությունը, արդեն իսկ պարտավոր ես աշխատել քեզ վրա, որովհետև կան որակներ, որոնք չունենալու դեպքում կծախողես աշխատանքդ ու կարիերադ: Պետք է նշեմ, որ այդ հատկանիշները ձևավորվում են հենց այս պահից սկսած, հենց այս «նստարանից», ու եթե ընտրել ես իրավաբանի մասնագիտությունը, պարտավոր ես հաշտ լինել արդարության հետ: Ես դեռ 7-րդ դասարանում էի, երբ որոշեցի, որ պիտի լինեմ արդարության զինվորը ու փոխեմ այն ամենը, ինչ ինձ դուր չի գալիս, ինչ անարդար է ու սխալ: Այն ժամանակ ես այնքան էլ պատկերացում չունեի բուն իրավագիտության մասին: Չնայած իմ պատկերացումները երեխայական էին, բայց մի բան կայուն ու հստակ էր. ես պահելու եմ արդարության ձգտումն իմ մեջ ու ուր էլ գնամ, պետք է գործեմ արդարության սկզբունքներին համապատասխան, հենց ի՛մ պատկերացումների արդարությանը համապատասխան:

Այն կարևոր հատկություններից, որ պետք է ունենա իրավաբանը՝ չստելն է: Ազնիվ լինել՝ թեկուզ փոքր հարցերում, ազնիվ լինել, որպեսզի քեզ թերարժեք չզգաս, քայլերումդ վստահ լինես: Ես ինձ լավ եմ զգում, երբ գործում եմ ազնիվ, երբ հաղթում եմ ազնվությամբ: Ուժը հենց ազնիվ քայլերի, արդարության և ամենակարևորը՝ չստելու մեջ է: Իրավաբանը հենց այս հատկանիշների կրողը պետք է լինի: Ինչ խոսք, պետք է լինել խելացի, բանիմաց մասնագետ, բայց դա ոչինչ է, եթե բացակայում են անաչառության, ազնվության և մյուս վեհ հատկանիշները: Այնքա՛ն կարևոր է փայլել մարդկային հատկանիշներով: Հենց հիմա էլ ես՝ որպես ուսանող, իմ ապագան կերտելու համար օրինակ եմ վերցնում Կրթահամալիրում ավելի սիրված ու հարգված այն բանիմաց, բայց մարդկային բարձր արժեքներ դավանող դասախոսներից, իսկ նրանք քիչ չեն մեր կրթօջախում: Գրեթե վստահ եմ, որ իմ քրտնաջան աշխատանքով, լավագույնին հասնելու անկոտրում ձգտումով ես կդառնամ իմ պատկերացրած պահանջված մասնագետը: Ի վերջո, մասնագիտական և մարդկային հատկանիշների կայուն համակցություն ձևավորելով միայն կարող ես լինել լավ իրավաբան, հզոր մասնագետ:

Լաուրա Գևորգյան,
իրավագիտության ֆակուլտետ,
4-րդ կուրս

ԼԻՆԵՐ ՄԻ ՆԿԱՐ

Լիներ մի նկար,
Ու այդ նկարում՝ խաղաղ երեկո,
Մի վրձին լիներ,
Ու ես ներկեի պայծառ գույներով
Երեկոն այդ մութ:
Լիներ մի նկար,
Ու այդ նկարում՝ աստղեր բյուրավոր,
Մի վրձին լիներ,
Ու ես ներկեի ջերմ երազանքով
Աստղին այդ ընկնող,
Մի նկար լիներ,
Ու այդ նկարում՝ մանուկներ քնած,
Մի վրձին լիներ,
Ու ես ներկեի անուշ երազով
Կոպերը նրանց:
Լիներ մի նկար,
Ու այդ նկարում՝ թռչուններ զվարթ,
Մի վրձին լիներ,
Ու ես ներկեի տաք հնչյուններով
Շուրթերը նրանց:
Լիներ մի նկար,
Ու այդ նկարում՝ արշալույս բացվող,
Մի վրձին լիներ,
Ու ես ներկեի ժպտուն շողերով
Արև արթնացող,
Մի նկար լիներ,
Ու այդ նկարում՝ մարդիկ ժպտացող,
Մի վրձին լիներ,
Ու ես ներկեի վառ երանգներով
Աչքեր փայլփլող:
Լիներ մի նկար,
Ու այդ նկարում՝ փոքրիկ մի մատուռ,
Մի վրձին լիներ,
Ու ես ներկեի ուժգին հավատքով
Աղոթքներ ճախրող:
Լիներ մի նկար,
Ու հնար լիներ՝ լինել նկարում...

Գրետա Մեջլումյան

ԱՄԱՆՈՐՅԱ ԿԱՏԱԿՆԵՐ

- Ինչպե՞ս նշեցիր Ամանորը:
- Երևի շատ լավ, որովհետև ոչինչ չեմ հիշում:

***

Ամանորին իրականություն են դառնում բոլոր երազանքները: Ուղղակի հունվարի 1-ին քչերն են հիշում, թե ինչ երազանք էին մտապահել:

***

- Ջմե՛ռ պապիկ, շնորհակալություն նվերի համար:
- Չարժե, մանրուք է: Շնորհակալության կարիք չկա:
- Ես էլ եմ էդպես մտածում, ուղղակի մայրիկն է պահանջել, որ ասեմ...

***

Հունվարի 1-ին ամուսինը՝ կնոջը.
- Այսօր տոն է, և ես վայելելու եմ այս օրը: Ահա, գնել եմ կինոյի երեք տոմս:
- Ինչո՞ւ երեք, սիրելի՛ս:
- Դեե՜ե, քեզ և ծնողներիդ համար:

***

- Ի՞նչ ես նվիրել կնոջդ Ամանորին:
- Ուղեգիր՝ դեպի Թայլանդ:
- Իսկ նա՞ քեզ ինչ նվեր է արել:
- Թռել է...

***

Նոր տարին նշելու հայկական բանաձևը: Լա՜վ կերանք, հիմա կարելի է քնել: Լավ քնեցինք, հիմա կարելի է ուտել...

***

Հունվարի 1-ին ոստիկանը մի մեքենա է կանգնեցնում: Մի կերպ դուրս է գալիս հարբած վարորդը և ասում.
- Պատկերացնու՞մ ես, շե՛ֆ, գիշերը երեքով չորս շիշ օղի խմեցինք, վրայից էլ՝ մի արկղ գարեջուր:
Ոստիկանը.
- Ի՞նչ, մի հատ հո՛ արա:
- Շե՛ֆ, ուրեմն դու ինձ չե՞ս հավատում:

***

Կինը հյուրընկալության է գնացած լինում: Վերադառնալով տուն՝ պատմում է ամուսնուն.
- Շատ լավ երեկո անցկացրինք: Տանտերերը խնդրեցին, որ ես երգեմ, համաձայնեցի:
Ամուսինը.
- Ճիշտ էլ արել ես: Ես դրանց հեչ չեմ սիրում:

***

Նոր տարուց հետո հանդիպում են երկու ընկեր.
- Հը՞, ո՞նց դիմավորեցիր Նոր տարին:
- Դե՛, վատ չէր, իսկ դու՞:
- Չգիտեմ, դեռ չեն պատմել:

***

- Հայրի՛կ, գուշակիր, թե որ գնացքն է ամենից շատ ուշանում:
- Չգիտեմ, տղա՛ս, ո՞րը:
- Այն գնացքը, որը դու խոստացել էիր նվիրել նախանցյալ տարի...

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «ՁԱՆԳԱԿ» հրատարակչության տպարանում
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 26. 12. 2022թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան